ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 օգոստոսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

114
(2780)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍԱՌԵՑՐԵԼ Է ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շատ անդամներ ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Լիլիթ Մակունցի հետ լարվել են: Բանն այն է, որ Մակունցը ԱՄՆ տեղափոխվելուց հետո կապը կտրել է բոլոր ՔՊ-ականների հետ. ինչպես իշխանական մեր աղբյուրներն են պատմում՝ եթե նախկինում որեւէ հարց էր լինում, դիմում էին Լիլիթ Մակունցին, նա անպայման ընդառաջում էր թիմակիցներին, կատարում էր նրանց խնդրանքը, բայց հիմա Մակունցն այլեւս առաջվանը չէ. նախկին խմբակցության անդամների հետ չի շփվում, անգամ նրանց զանգերին չի պատասխանում, միայն իշխանական վերնախավի հետ է շփվում, ավելի կոնկրետ՝ Նիկոլ Փաշինյանի, նրան է զեկուցում ամեն ինչ, նրանից է հրահանգներ ստանում, Արարատ Միրզոյանի հետ շփվում է ի պաշտոնե՝ որպես արտգործնախարարի: Սրանից ՔՊ-ականները խիստ վրդովվել են, ասում են, որ երբ աշխատանքային այցով տարբեր երկրներ են գնում, դեսպանները գրկաբաց ընդունում են իրենց, ուղեկցում ժամանցի վայրերով, խանութներով, մինչդեռ Մակունցը շատ դեպքերում չի դիմավորում, սառն է: ՔՊ-ականների համար տարօրինակ է Լիլիթ Մակունցի այս պահվածքը, քանի որ նա թիմում այն քչերից է եղել, որ բոլորի հետ լավ հարաբերություններ է ունեցել, մինչդեռ հիմա դարձել է արհամարհող:

Երբ պաշտոնական լրահոսում հայտնվեց տեղեկություն, որ Երեւանի փոխքաղաքապետ Հրաչյա Սարգսյանը նշանակվել է ՀՀ պաշտպանության փոխնախարար, շոկ առաջացավ: Պարզվում է՝ Պաշտպանության նախարարությունում էլ են խիստ անակնկալի եկել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ մինչ Հրաչյա Սարգսյանին ՊՆ փոխնախարար նշանակելը նախարարությունում խոսակցություններ են եղել՝ ինչ կապ ունի 38-ամյա Սարգսյանը Զինված ուժերի կամ ռազմական գերատեսչության հետ: Փաստացի, բացի զինծառայությունից, ոչ մի ընդհանրություն չունի նա բանակի հետ: Քաղաքական իշխանությունները, որ այդպիսի շոկային որոշմամբ Սուրեն Պապիկյանին նշանակեցին նախարար, հանգստացրել են բարձրաստիճան զինվորականներին, թե փոխնախարարը անվտանգության ոլորտի հետ կապ չունի, ու նա տնտեսական հարցերով է աշխատանք տանելու: Հիշեցնենք, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը պաշտպանության փոխնախարարներից մեկն է: Երբ նա քաղաքապետ էր աշխատում, նրա օրոք Երեւանի մետրոպոլիտենում ահռելի չարաշահումներ են եղել, որի առիթով քրգործ է հարուցվել: Չարաշահումները եղել են, ըստ տեղեկությունների, 2018-2021 թվականներին՝ Հայկ Մարությանի իշխանավարման օրոք: ՊԿԾ-ն այդ լուրերը ո՛չ հերքել, ո՛չ հաստատել է: Գուցե Մարությանից հետո իշխանության գալով՝ Հրաչյա Սարգսյանը չէր սպասում, որ Երեւանի քաղաքապետարանում իրավիճակն այդքան վատ է, գուցե նաեւ հենց այդ պատճառով էլ Հրաչյա Սարգսյանը հրաժարական ներկայացրեց:

Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադեւոսյանը 2022 թվականի հայտարարատու տարում հայտարարագրել է ամուսնու հետ համատեղ սեփականությամբ մեկ բնակարան Երեւանի Արաբկիր վարչական շրջանում: Նա 2022 թվականին Արաբկիր վարչական շրջանում հողամաս է նվիրատվություն ստացել: Ում կողմից է նվեր ստացել՝ չի նշել դատավորը: Նշենք, որ Թադեւոսյանի բանկային ավանդները տարեսկզբին կազմել են 12 մլն, որոնք տարեվերջին զրոյացել են: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 7 մլն 742 հազար դրամ, 1 հազար 337 դոլար եւ 411 եվրո: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 44 մլն 360 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտներ 54 մլն 036 հազար դրամ, որից 18 մլն 085 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԲԴԽ աշխատակազմի դատական դեպարտամենտից: Նա դասախոսում է Սլավոնական եւ Երեւանի պետական համալսարաններում՝ 704 հազար դրամ ստանալով: Թադեւոսյանը նման գումարների հետ միասին հիփոթեքով բնակարան եւ ավտոտնակ է հայտարարագրել՝ 34 մլն 891 հազար դրամ ընդհանուր արժեքով: 2 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող միանվագ ծախսել է 23 մլն 500 դրամ: Թադեւոսյանի ամուսինը՝ Վահագն Գրիգորյանը, ըստ կնոջ հայտարարագրի, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման եւ ներդրումային ծրագրերի վարչության պետն է: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1մլն 200 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 28 մլն, իսկ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 2 մլն 283 հազար դրամ: Հիշեցնենք նաեւ, որ Լիլիթ Թադեւոսյանը «Մարտի 1»-ի գործը քննող դատավորներից մեկն է: Նիկոլ Փաշինյանին եւ մյուսներին 2008-ին համարում էր հանցագործ, ոչ թե քաղբանտարկյալ, իսկ հիմա Նիկոլ Փաշինյանի իշխանությանն է ծառայում:

Ծուտով կլրանա մեկ տարին, ինչ ԱԺ նախկին պատգամավոր Լեւոն Սարգսյանի՝ (առավել հայտնի ալրաղացի Լյովիկ) գործով քննությունը իրականացվում է ՀՀ վերաքննիչ դատարանում, սակայն մեկ տարվա ընթացքում ընդամենը 3 նիստ է կայացել: Մեզ հայտնի դարձավ, որ մեկ նիստը չի կայացել. կոլեգիալ կազմի դատավոր Ա. Բեկթաշյանի վատառողջ լինելն է եղել պատճառը, մյուս դեպքերում նախագահող դատավոր Ա? Նիկողոսյանի՝ որպես Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի՝ Ազգային ժողովում կայանալիք ընտրությանը հնարավոր մասնակցության, ինչպես նաեւ պաշտպանի կողմից դատական նիստը հետաձգելու վերաբերյալ ներկայացված միջնորդության պատճառով չի կայացել: Ու մինչ նիստերը հետաձգվում են, ԱԺ նախկին պատգամավորը շարունակում է մնալ կալանքի տակ ԱԱԾ մեկուսարանում: Հիշեցնենք, որ ԱԺ նախկին պատգամավոր Լեւոն Սարգսյանը դատապարտվել է ազատազրկման՝ 9 տարի ժամկետով: Նա կալանավորվել էր 2020 թվականի օգոստոսի 10-ին, եւ երեք տարի է արդեն՝ կալանքի տակ է:

ԶՐՈՒՅՑ

ՏԱԹԵՎ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԸ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ թատրոնի եւ կինոյի դերասանուհի Տաթեւ Հովակիմյանը երեկ մասնակցում էր իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստին:

Հիշեցնենք, որ այդ նիստի ժամանակ ներկայացվել էր Երեւանի ավագանու սպասվող ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակը, քննարկվել են նաեւ ընտրություններին առնչվող կազմակերպչական բնույթի հարցեր:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց դերասանուհի Տաթեւ Հովակիմյանի հետ՝ հասկանալու՝ արդյոք նա մտադիր է մուտք գործել քաղաքականություն, հնարավոր է ՔՊ-ի ցուցակով մասնակցի ավագանու ընտրություններին:

-Տիկին Հովակիմյան, երեկ նկատեցինք, որ մասնակցում եք իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստին, որի ժամանակ քննարկվել են ավագանու առաջիկա ընտրությունների վերաբերյալ հարցեր: Կարո՞ղ ենք արձանագրել, որ որոշել եք մուտք գործել քաղաքականություն եւ ՔՊ-ի ցուցակով մասնակցել ավագանու ընտրություններին:

-Հրավեր ստացել եմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից լինել ավագանու անդամ եւ զբաղվել մշակութային ոլորտով: Գիտեք, որ ամեն ավագանի նաեւ ունի իր ֆունկցիան, այդ թվում՝ մշակութային: Այս ամենը քաղաքականացնելը, առավել եւս՝ ավագանու դեպքում, եւ այն որակել քաղաքականություն մտնել ինձ համար շատ ամպագոռգոռ է, առավել եւս, որ ես որեւէ նկրտում չունեմ քաղաքականությամբ զբաղվելու: Ինձ հետաքրքիր է զբաղվել երկրի խնդիրներով, որոնք իմ կոմպետենտության սահմաններում են, այս դեպքում՝ մշակույթը: Կան թատրոններ եւ մշակութային կառույցներ, որոնք քաղաքապետարանի ենթակայության տակ են: Կարծում եմ, որ ես կոմպետենտ եմ դրանց խնդիրներով զբաղվելու եւ լուծում տալու համար: Ընդունել եմ հրավերը եւ մասնակցելու եմ ավագանու գալիք ընտրություններին: Ինձ հետաքրքրում է դա, իհարկե, եթե Երեւանում լինեն այլ խնդիրներ, որոնք աչք կծակեն, դրանց մասին ես կտեղեկացնեմ, բայց ինձ առավել հետաքրքիր է այն ոլորտը, որում ես կամ:

-Դուք պատերազմից հետո ֆեյսբուքյան գրառումներով քննադատում էիք իշխող ուժի վարած քաղաքականությունը: Հիմա այլեւս հակասություններ չկա՞ն:

-Ես կարծում եմ՝ լավագույնն ադեկվատ իշխանությունն է, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի, որը կբարձրաձայնի խնդիրների մասին, իշխանությունը կարողանա դա ընդունել: Կարծում եմ՝ եթե ես երբեւէ քննադատել եմ իշխանության արած որեւէ քայլ, ապա դա հենց խոսում է այն մասին, որ դրան նրանք նորմալ են վերաբերվում: Ես սուր քննադատական գրառում չեմ հիշում, բայց հիշում եմ, որ պարբերաբար բարձրաձայնել եմ խնդիրների մասին: Դրանք ավելի շատ վերլուծական գրառումներ են, թե ինչ կարելի է անել, ինչ չի կարելի, ամեն դեպքում, չեմ հիշում սուր քննադատական գրառում, իսկ վերլուծություններ միշտ եղել եւ լինելու են իմ կողմից:

Ես ուրախ եմ, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում նորմալ են մոտենում քննադատություններին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

ԿՎԵՐՑՆԻ՞ ՄԱՆԴԱՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում ընդդիմադիր «Պատիվ ունեմ» խմբակցությունից կլինի պատգամավոր, որը մանդատը վայր կդնի: Ըստ կանոնակարգի՝ հնարավոր է՝ նրան փոխարինի դաշինքի նախընտրական ցուցակի հաջորդ համարում ընդգրկված Թեհմինա Վարդանյանը, որը Երեւանի ավագանու «Լույս» խմբակցության անդամ է: «Ժողովուրդ» օրաթերթը Թեհմինա Վարդանյանից հետաքրքրվեց՝ եթե պահը գա, կվերցնի արդյոք պատգամավորական մանդատը.

«Նման տեղեկություններ չունեմ: Ես բազմաթիվ անգամներ եմ մտածել այդ մասին, այսինքն՝ եթե ցուցակի հերթական համարը հասնի ինձ, ես վերցնելո՞ւ եմ մանդատը, թե՞ ոչ: Ես բավականին ինքնաբավ եմ, աշխատում եմ մի կազմակերպությունում, որտեղ ինձ հոգեպես հանգիստ է, ինձ տարբեր ուղղություններ զոմբիներ չեն հայհոյում, ինչպես քաղաքական դաշտում են անում, բայց ինձ ընտանիքիս անդամներն ու ընկերներս խորհուրդ են տալիս՝ չթողնել այս ամենը: Մանդատը վերցնելու մասով իրարամերժ զգացումներ ունեմ, փորձում եմ այդ մասին չմտածել մինչեւ այդ պահը, որովհետեւ ընթացքում լինելու է ժամանակ՝ որոշելու մանդատը վերցնել, թե չվերցնել. այդ պահին կմտածեմ, կքննարկեմ ընտանիքիս հետ, ընկերներիս հետ եւ նոր կորոշեմ: Որեւէ քաղաքական անձի հետ ես քննարկելու բան չունեմ՝ լինի դա իշխանություն, թե ընդդիմություն»,-ասաց նա:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱՊ ՉԻ ՀԱՍՏԱՏԵԼ

Ադրբեջանի կողմից Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ Արցախից Հայաստան բուժման նպատակով տեղափոխվող 68-ամյա Վագիֆ Խաչատրյանը հուլիսի 29-ին Ադրբեջանի կողմից առեւանգվելուց հետո ընտանիքի անդամներից ոչ մեկի հետ առ այսօր կապ չի հաստատել: Այս մասին «Արցախպրես»-ի թղթակցի հետ զրույցում տեղեկացրեց Վագիֆ Խաչատրյանի դուստր Ծովինար Խաչատրյանը:

«Ամեն օր մի քանի անգամ գնում ենք Կարմիր խաչի Ստեփանակերտի գրասենյակ, իսկ քույրս՝ Երեւանի՝ որեւէ տեղեկություն իմանալու համար: Մեզ ասում են, որ ոչ մի տեղեկություն չունեն: Հայտնում են, որ բանակցում են հորս տեսակցելու համար, բայց առայժմ անարդյունք»,-մանրամասնել է Ծովինար Խաչատրյանը:

Նրա խոսքով՝ Կարմիր խաչի ներկայացուցիչը միայն հուլիսի 29-ի կեսգիշերին է զանգահարել եւ տեղեկացրել, որ Վագիֆ Խաչատրյանը գտնվում է Բաքվում՝ հիվանդանոցում, որտեղ նրան արհեստական շնչառության սարք է միացվել:

Դստեր խոսքով՝ հայրը առողջական խնդիրներ ունի եւ մեկ անգամ եւս հորդորում է միջազգային կառույցներին արձագանքել իրենց խնդրանքներին եւ հորը օր առաջ վերադարձնել հայրենիք՝ կյանքը փրկելու:

Ի դեպ, Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը երեկ հաղորդագրություն է հրապարակել՝ նշելով, որ Սաբինա Ալիեւան անձամբ հանդիպել է Վագիֆ Խաչատրյանին: Ըստ հաղորդագրության՝ Խաչատրյանը, իբր, «երախտագիտություն է հայտնել ադրբեջանական պետությանը վերաբերմունքի, պահման պայմանների եւ ընտանիքի հետ կապ հաստատելու հնարավորության համար»: Այնինչ, փաստորեն, ընտանիքն ընդհանրապես կապ չի ունեցել Խաչատրյանի հետ, ում նույնիսկ Կարմիր խաչը չի կարողացել այցելել հուլիսի 29-ից հետո:

ԿՄԱՄՆԱԿՑԻ՞ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Օգոստոսի 3-ից մեկնարկել է աշնանը սպասվող ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների առաջադրման պաշտոնական գործընթացը, որը կտեւի 10 օր, կավարտվի օգոստոսի 13-ին:

Ավագանու ընտրություններին մասնակցել ցանկացող քաղաքական ուժերը եւ դաշինքները 10-օրյա ժամկետում ԿԸՀ պետք է ներկայացնեն գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

«Ժողովուրդ» օրաթերթը ԿԸՀ-ից տեղեկացավ, որ դեռ որեւէ կուսակցություն չի ներկայացրել գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

«Ժողովուրդ» օրաթերթը ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանից հետաքրքրվեց՝ ինչ որոշում ունի խմբակցությունը՝ ավագանու ընտրություններին մասնակցելու մասով: «Այդ հարցը դեռ չենք քննարկել, որոշում չունենք. հենց լինի, հայտարարությամբ հանդես կգանք»,-ասաց նա:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՆԻՍՏ ԿԱՆԵՆ

Արցախի Հանրապետության Սահմանադրության 114-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 40-րդ հոդվածների համաձայն՝ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ 2023 թվականի օգոստոսի 7-ին՝ ժամը 10:00-ին, կգումարվի Արցախի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան՝ նախաձեռնողի սահմանած՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի ընտրության օրակարգով: Այս մասին տեղեկացնում են Արցախի ԱԺ-ից:

ՈՒ՞Մ ԵՆ ՔՎԵԱՐԿՈՒՄ

Եթե առաջիկա կիրակի օրը խորհրդարական ընտրություններ լինեին, հարցված քաղաքացիների մեծամասնությունն ընտրությունների չէր գնա: Այս մասին օգոստոսի 4-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, հայտնեց «GALLUP International association»-ի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արամ Նավասարդյանը: Նրա խոսքով՝ քաղաքացիներին հետեւյալ հարցն են տվել. «Ո՞ր կուսակցության կամ դաշինքի օգտին կքվեարկեիք»: Հարցվածների 13,3 տոկոսը նշել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Մյուս տոկոսները բաշխվել են տասնյակից ավելի կուսակցությունների ու դաշինքների օգտին:

«Հայաստան» դաշինքին 3,8 տոկոս ձայն է բաժին հասել, «Բարգավաճ Հայաստանին»՝ 1,8 տոկոս, «Պատիվ ունեմ»-ին՝ 1,5 տոկոս, Վարդան Ղուկասյանի («Դոգ») ղեկավարած «Հանրային ձայն» կուսակցությանը՝ 1,2 տոկոս, նույն արդյունքն է նաեւ «Հանրապետություն» կուսակցության դեպքում: Հայ հեղափոխական դաշնակցության օգտին քվեարկելու պատրաստակամություն է հայտնել հարցվածների միայն 0,8 տոկոսը, «Քաղաքացու որոշում»-ին՝ 0,5 տոկոս, Հայ ազգային կոնգրեսին եւ «Սասնա ծռեր»-ին՝ 0,4 տոկոս, «Ապրելու երկիր» կուսակցությանը՝ 0,3 տոկոս, «Լուսավոր Հայաստան»-ին՝ 0,2 տոկոս, «5165»-ին՝ 0,1 տոկոս եւ այլն:

«Փորձել ենք ոչ մեկին չնեղացնել, եւ ստացված թեկուզ նվազագույն ցուցանիշները ներկայացրել ենք: 36,3 տոկոսը նշել է, որ չի մասնակցի ընտրություններին, դժվարացել է պատասխանել 20,2 տոկոսը»,- նշեց Նավասարդյանը:

Թե ինչպես է ստացվում, որ ստեղծված իրավիճակում կրկին թեպետ նվազագույն, բայց ամենաշատ ձայները «Քաղաքացիական պայմանագիրն» է հավաքել, Նավասարդյանը նշում է՝ հարցվածների շարքում կան նաեւ պետական ծառայողներ, ոստիկաններ եւ այլն:

«Եկեք չմոռանանք, որ հարցվածների շարքում կան ահռելի մեծ, ուռճացված պետական ապարատի ծառայողները, որոնք, մենք գիտենք, հակված են մշտապես իշխող ուժին ձայն տալ կամ գոնե ասել, որ տալու են: Այստեղ կան ոստիկանական ուժերի, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, որոնք եւս փորձում են ձայնը տալ կամ ասել, որ տալու են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը»,- ասաց Նավասարդյանը:

Նա չի բացառում, որ եթե ՔՊ-ն չունենա իշխանական լծակներ, գրեթե հավասար կամ ավելի պակաս ձայներ կստանա, քան նշված կուսակցությունների մի մասը:

Նրա խոսքով՝ հաջորդ շաբաթ կամփոփեն նաեւ ավագանու ընտրություններում թեկնածուների վարկանիշները:

ՊԱՀԱՆՋ

ՀԿ–ՆԵՐԸ ԿԴԻՄԵՆ ՄԱԿ–ԻՆ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը, Հանրային լրագրության ակումբը, Իրավունքի զարգացման եւ պաշտպանության հիմնադրամը, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի վանաձորյան գրասենյակը, «Հանուն հավասար իրավունքների» ՀԿ-ն եւ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն համատեղ դիմում են ներկայացրել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ պետություններին՝ որպես միջազգային խաղաղության եւ անվտանգության հիմնական մանդատակիրների, եւ կոչ են արել հրատապ միջամտություն ցուցաբերել՝ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի լիակատար շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում սրվող հումանիտար ճգնաժամի առնչությամբ:

Լաչինի միջանցքը միակ փրկօղակն է, որը կապում է տեղի հայ ժողովրդին Հայաստանի Հանրապետությանը եւ աշխարհին:

Շրջափակումը նպատակ ունի տարածաշրջանի էթնիկ հայերի համար ստեղծել անտանելի կենսապայմաններ եւ դուրս մղել նրանց իրենց տներից: Վերջին օրերին իրավիճակը Լեռնային Ղարաբաղում ավելի է վատթարացել, բնակիչներն այժմ կանգնած են սովի անմիջական սպառնալիքի առաջ:

Կարեւոր է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ստանձնի պատասխանատվություն պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդին էթնիկ զտումներից եւ ցեղասպանությունից, որն իրականում տեղի է ունենում սովի ենթարկելու միջոցով:

Անվտանգության խորհուրդից, մասնավորապես, պահանջվում է՝

• ընդունել բանաձեւ, որը կդատապարտի շրջափակումը եւ կպահանջի անհապաղ բացել Լաչինի միջանցքը մարդկանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անարգել տեղաշարժի համար՝ համաձայն Արդարադատության միջազգային դատարանի միջանկյալ միջոցի:

• Անհետաձգելի միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի եւ Լաչինի միջանցքում միջազգային խաղաղապահ մանդատ ներգրավելու համար՝ ապահովելու հայ բնակչության անվտանգությունը 2025 թվականի նոյեմբերից հետո, այսինքն՝ Ռուսաստանի խաղաղապահ զորախմբի մանդատի ավարտից հետո:

• ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարից պահանջել տարածաշրջան ուղարկել փաստահավաք առաքելություն՝ տեղում իրավիճակը գնահատելու համար, ինչպես նաեւ նշանակել Լեռնային Ղարաբաղի հակամարտության գծով գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ՝ տարածաշրջանում երկարաժամկետ ներկայություն ապահովելու համար:

• ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարից պահանջել փաստահավաք առաքելություն ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ տեղում իրավիճակը գնահատելու եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին համապարփակ զեկույց ներկայացնելու համար, ինչպես նաեւ օգտագործել ՄԱԿ-ի մարդու իրավունքների բոլոր համապատասխան մեխանիզմները, այդ թվում՝ հատուկ խորհրդականների եւ հատուկ զեկուցողների՝ Լեռնային Ղարաբաղում մարդու իրավունքների, մարդասիրական եւ մարդու անվտանգության պայմանների վերաբերյալ անհապաղ հաշվետվություններ պատրաստելու համար:

• Դատապարտել հայերի նկատմամբ Ադրբեջանի էթնիկ ատելության քաղաքականությունը, որը վտանգի տակ է դնում տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության հաստատմանն ուղղված ցանկացած ջանք:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ՝ ԿԱՊԱՆՈՒՄ

Ռուսաստանն ակտիվ նախապատրաստական աշխատանքներ է տանում Կապանում գլխավոր հյուպատոսություն բացելու ուղղությամբ:

ՏԱՍՍԻն տված հարցազրույցում ՌԴ ԱԳՆ ԱՊՀ երկրների չորրորդ վարչության տնօրեն Դենիս Գոնչարը հայտնել է, որ ռուսաստանցի դիվանագետներն արդեն հաջորդ ամիս կմեկնեն Սյունիքի մարզ:

«Մենք ակտիվորեն պատրաստվում ենք Սյունիքի մարզի Կապան քաղաքում ՌԴ գլխավոր հյուպատոսության բացմանը՝ լիարժեք ձեւաչափով: Այս նախաձեռնությունը հավանության է արժանացել մեր ղեկավարների կողմից մայիսի 25-ին՝ Մոսկվայում կայացած հանդիպման ժամանակ: Արդեն սեպտեմբերին ռուս դիվանագետները կայցելեն տարածաշրջան՝ անմիջապես «տեղում» օպերատիվ հարցերով զբաղվելու համար», - նշել է պաշտոնյան:

Գոնչարը հավելել է, որ Ռուսաստանի եւ Հայաստանի քաղաքների միջեւ եղբայրական հարաբերությունների հաստատման հետ կապված բազմաթիվ առաջարկներ կան, եւ աշնանը Հայաստանում պլանավորված է հերթական՝ 10-րդ Միջտարածաշրջանային ֆորումը:

ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի մասնակցությամբ նախագահական նստավայրում այսօր տեղի է ունեցել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գարիկ Աբելյանի, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Արսեն Գեղամյանի, Միշա Էլոյանի, Արփինե Շտոյանի, Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անի Կարաքեհյանի, Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լիլիթ Մկրտչյանի, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սերժ Ռուշանյանի, Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Գագիկ Հարությունյանի երդման արարողությունը:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը շնորհավորել է նորանշանակ դատավորներին եւ հաջողություններ մաղթել պատասխանատու աշխատանքում:

ԿԱՅՑԵԼԵՆ ԿՈՌՆԻՁՈՐ

11-րդ օրն է, ինչ ՀՀ կառավարության ուղարկած հումանիտար օգնությունը Կոռնիձորի սահմանային հատվածում է: 21 բեռնատար շարունակում է կանգնած մնալ տեղում:

Կոռնիձորի սահմանային հատված կայցելեն հումանիտար հարցերով եւ երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական եւ միջազգային կազմակերպություններ, որտեղ կանգնած են բեռնատարները: Խոսքը 15 կազմակերպությունների մասին է: Նրանց կուղեկցի ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարարը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆ ՈՒ ԾԵԾԸ

Մենք արդեն գրել էինք, որ հունիսի 7-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, Արագածավան համայնքի հայտնի ՔՊ-ական, նույն համայնքի կոմունալ ծառայության ղեկավար Սուրեն Թորոսյանը, որը հաճախ է աչքի ընկնում ընդդիմության հասցեին կոշտ, երբեմն բռնության կոչեր պարունակող «լայվերով», դաժան ծեծի էր ենթարկել նույն համայնքի բնակիչ Արմեն Սահակյանին: Իշխանության ներկայացուցիչ Սուրեն Թորոսյանը, որն այժմ քրեական գործով մեղադրյալ է, տուժողին փայտով այնքան էր հարվածել, մինչեւ փայտը կոտրվել էր գլխին հերթական հարվածից: Հիշեցնենք, որ տուժող Արմեն Սահակյանը տառապում է էպիլեպսիա հիվանդությամբ: Այս ամենից հետո, պարզվում է, մեղադրյալին վերագրել են ընդամենը թեթեւ մարմնական վնասվածք հասցնելու մեղադրանք, մինչդեռ, ինչպես նշում է փաստաբան Արսեն Բաբայանը, որն այդ քրեական գործով հանդիսանում է տուժողի փաստաբանը, մեղադրանքը չի համապատասխանում կատարված արարքին: Այս առնչությամբ զրուցել ենք «Լեգիս» փաստաբանական գրասենյակի կառավարող գործընկեր, փաստաբան Արսեն Բաբայանի հետ:

-Դուք բազմիցս հրապարակումներ եք արել այն մասին, որ ՔՊ ներկայացուցիչ Սուրեն Թորոսյանին վերագրված հանցավոր արարքը չի համապատասխանում իրական արարքին: Խնդրում եմ մանրամասնել, թե ինչի մասին է խոսքը:

- Նախ՝ շնորհակալություն եմ հայտնում, որ հենց այս գործով ձեր ներկայացրած լրատվամիջոցը ցուցաբերում է հետեւողականություն: Շնորհակալությունս պայմանավորված է այն հանգամանքով, որ տուժող Արմեն Սահակյանը, որին ես ներկայացնում եմ այդ քրեական գործով, հասարակ ընտանիքից է, աշխատասեր մի երիտասարդ, որն անգամ փաստաբանական ծառայություններից օգտվելու հնարավորություն չունի: Մինչդեռ այս գործով մեղադրյալը, որն ունի մշտական աշխատանք, վարձատրվում է բնակչության հարկերից, օգտվում է հանրային պաշտպանի գրասենյակի անվճար փաստաբանական ծառայություններից: Ինչ վերաբերում է քրեական վարույթին, ապա այստեղ իսկապես աննախադեպ ապօրինություններ են կատարվել: Այդ ապօրինություններն այնքան շատ են, որ մեկ հարցազրույցում գուցե հնարավոր էլ չլինի անդրադառնալ: Այնուամենայնիվ կանդրադառնամ դրանցից մի քանիսին: Նախ՝ եկեք ներկայացնեմ քրեական վարույթի նյութերում առկա փաստական տվյալները? ուրեմն, Սուրեն Թորոսյանը մեքենայով անցնելիս տեսնում է տուժողին, կանգնում է եւ վերջինիցս պահանջում, որ նստի մեքենան: Մերժում ստանալուց հետո իջնում է մեքենայից, իր մոտ եղած գազաբալոնից գազ է փչում տուժողի աչքերին, որի հետեւանքով տուժողը կռանում է եւ սկսում է տրորել աչքերը: Իսկ այդ ընթացքում Սուրեն Թորոսյանը երկու ձեռքով բռնած փայտով այնքան է հարվածում տուժողին, մինչեւ հերթական հարվածը գլխին հասնելուց հետո այդ փայտը կտոր-կտոր է լինում: Դրանից հետո գետնից վերցնում է քար, բղավում, որ «հեսա կտամ□», սակայն չի կարողանում քարով հարվածել, քանի որ ականատեսներից մեկը հասցնում է քարը Թորոսյանի ձեռքից խլել: Դրանից հետո մեղադրյալը նստում է մեքենան եւ հեռանում:

-Իսկ այդ արարքից ի՞նչ հետեւանքներ են առաջանում:

-Փաստացի առաջացած հետեւանքը, ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության, թեթեւ մարմնական վնասվածքն է, սակայն, ինչպես նկատեցիք, ներկայացրածս փաստական տվյալները վկայում են, որ Թորոսյանն ունեցել է լրիվ այլ դիտավորություն, առնվազն՝ ոչ թեթեւ մարմնական վնասվածք պատճառելու: Իսկ այն դեպքում, եթե նախաքննությունը կատարվեր օրինական՝ օբյեկտիվ, լրիվ եւ բազմակողմանի, ապա հնարավոր չէր լինի այդքան մեղմ հոդվածով որակել կատարված ենթադրյալ հանցագործությունը: Նախաքննության իմ համոզմամբ դիտավորյալ ապականումը ունեցել է նպատակ, որպեսզի մեղադրանքը լինի ամենամեղմը, իսկ անգամ դա՝ հնարավորինս չիմնավորված: Այսինքն՝ նախաքննությունը կատարվել է միակողմանի եւ հօգուտ մեղադրյալի:

-Մենք տեղեկացանք, որ այս գործով նախաքննությունն արդեն ավարտվել է, եւ շուտով պետք է սկսվի դատաքննությունը: Ի՞նչ պետք է արվեր նախաքննության ընթացքում, որ չի արվել, եւ ինչպե՞ս է հնարավոր շտկել այդ սխալները:

-Դուք ճիշտ եք, նախաքննությունն արդեն ավարտվել է: Իսկ ամբողջ նախաքննությունը տեւել է ընդամենը մեկ ամիս, եւ որեւէ դեպքում այդպիսի ժամկետում այսպիսի արարքի համար պարզապես անհնարին կլիներ կատարել օբյեկտիվ, լրիվ եւ բազմակողմանի նախաքննություն: Կարծում եմ, որ նախաքննության մարմնին եւ դատախազությանը ստիպել են արագ-արագ ավարտել գործն ու մեղադրյալի համար լավագույն պայմաններում գործն ուղարկել դատարան: Ասածումս համոզվելու համար կպատասխանեմ Ձեր հարցի երկրորդ մասին, թե ինչ պետք է արվեր, որ չի արվել: Ուրեմն, նախաքննության ընթացքում ստացված տվյալների համաձայն՝ գործածվել է հատուկ քիմիական գազ, որի գործածման հետեւանքով տուժողը զրկվել է ինքնապաշտպանվելու հնարավորությունից: Քննիչը որեւէ կերպ, բացի մեղադրյալին այդ մասին հարցնելուց եւ հերքում ստանալուց, չի պարզել, թե արդյոք կիրառվել է այդպիսի գազ: Իսկ վերջում գազի գործադրման հանգամանքը համարել է ոչ արժանահավատ եւ չի ընդգրկել մեղադրանքում: Մինչդեռ, նախաքննության մարմինը պարտավոր էր ձեռնարկեր այնպիսի միջոցներ, որոնք կհաստատեին կամ կհերքեին գազաբալոնի օգտագործումը: Օրինակ՝ համապատասխան փորձաքննություն նշանակվելու դեպքում, ամենայն հավանականությամբ, փորձագետը կտար անհրաժեշտ եզրակացությունը:

Բացի դրանից, նախաքննության մարմինը, ստանալով տվյալ այն մասին, որ մեղադրյալի եւ տուժողի միջեւ ամիսներ առաջ տեղի է ունեցել վիճաբանություն, ինչն էլ կարող էր լինել հենց այս դեպքի պատճառը, ուստի դրանով էլ հնարավոր կլիներ գնահատել հանցավորի դիտավորությունը, որեւէ արդյունավետ միջոց չի ձեռնարկել պարզելու այդ տվյալի իսկությունը կամ հերքելու այն: Նախաքննության մարմինը դեպքի հենց հաջորդ օրը ոստիկանությանը տվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն, որում ճշտման համար շատ կարեւոր հարցեր է առաջադրել եւ նշել, որ այդ հարցերի պատասխաններն անհրաժեշտ են նախաքննությունն իրականացնելու համար: Սակայն չի սպասել ոստիկանության կողմից այդ հանձնարարության կատարմանը եւ առանց այդ տվյալների ավարտել է նախաքննությունը եւ գործն ուղարկել դատարան: Իսկ այդ հանձնարարականով ճշտման համար ներկայացվել են հետեւյալ հարցերը.

1) ո՞րն է եղել Արմեն Սահակյանի եւ Սուրեն Թորոսյանի վիճաբանության բուն պատճառը, ի՞նչ գործողություններ են նրանք կատարել դեպքի ընթացքում,

2) ովքե՞ր են մասնակից եղել վիճաբանությանը, եւ ի՞նչ գործողություններ են կատարել,

3) դեպքին հնարավոր ականատես անձանց ինքնությունը, անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու նպատակով ապահովել նրանց ներկայությունը Թալինի քննչական բաժին,

4) դեպքի վայր հանդիսացող տարածքում տեսանկարահանող սարքեր առկա՞ են, թե՞ ոչ. եթե այո, ապա ո՞ր հասցեներում. ձեռնարկել աշխատանքներ տեսագրությունները վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու նպատակով,

5) ի՞նչ գործիք կամ միջոց է գործադրվել վիճաբանության ժամանակ,

6) տուժողը ցուցմունքով հայտնել է, որ գյուղացիները դժգոհ են կատարողի գործողություններից. պարզել, թե որն է դժգոհության պատճառը, արդյոք կատարողը չարաշահել է իր պաշտոնեական դիրքը,

7) կողմերի միջեւ նախկինում վիճաբանություններ եղե՞լ են, թե՞ ոչ: Եթե այո, ապա ինչպե՞ս են ավարտվել նախկին վիճաբանությունները, ի՞նչ գործողություններ են կատարվել կողմերի կողմից, ովքե՞ր են մասնակցել եւ ի՞նչ գործողություններ են կատարել:

Կրկին կարդալով այս հարցերը ակնհայտ է դառնում, որ դրանց պատասխանները էական նշանակություն ունեն նախաքննության համար եւ անմիջականորեն հենց այդ հարցերի պատասխաններից է կախված, թե ինչ է կատարվել, ինչու է կատարվել, անգամ ինչ կկատարվեր, կամ մեղադրյալը ցանկանում էր կատարել, եթե այլ անձինք, անկախ մեղադրյալի կամքից, չկանխեին դեպքը: Միայն այսքանն էլ ամբողջապես բավարար է, որպեսզի հիմնավորապես պնդենք, որ նախաքննությունն իրականացվել է առնվազն հանցավոր անփութությամբ: Իսկ այդ առնչությամբ պատրաստվում ենք հանցագործության մասին հաղորդում ներկայացնել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՀՐԱՄԱՅԵԼ Է ՆԱՀԱՆՋԵԼ

ՊԲ N զորամասի հրաձգային վաշտի հրամանատար Վ.Հ.-ն ռազմական դրության ժամանակ մարտական գործողությունների պայմաններում 2020 թվականի նոյեմբերի 2-ին, չունենալով զբաղեցված մարտական դիրքերից նահանջելու վերաբերյալ ավագ պետի հրամանը կամ թույլտվությունը, հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու եւ տարածումը կանխելու փոխարեն, մարտական դիրքի անձնակազմին անհիմն հրամայել է նահանջել, ինչի հետեւանքով անձնակազմը լքել է մարտական դիրքերը: Այնուհետեւ Վ.Հ.-ն «ձախ ծնկան հոդի շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի, քերծվածքի, այտուցի ձեւով» թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք ստացած լինելու պատրվակով դիմել է բուժօգնության եւ մի քանի օրով ազատվել ծառայողական պարտականությունների կատարումից: Ապաքինվելուց եւ շարք վերադառնալուց հետո Վ.Հ.-ն, տեղեկանալով, որ վաշտի անձնակազմի հետ մեկնելու է մարտական առաջադրանք կատարելու, փորձել է համոզել սերժանտ Ա.Մ.-ին արհեստական եղանակով վնաս պատճառել իր առողջությանը. սերժանտ Ա.Մ.-ից մերժում ստանալուց հետո Վ.Հ.-ն որոշել է ինքնուրույն անդամախեղում կատարել: 2020 թվականի նոյեմբերի 6-ին՝ դեպի մարտական դիրքեր տանող ճանապարհով ընթանալու ժամանակ, Վ.Հ.-ն իրեն ամրակցված ինքնաձիգից կրակել է իր աջ ազդրին՝ առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս՝ առողջության տեւական քայքայումով: ՀՀ ՊԲ հրամանատար Վ.Հ.-ն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: 2023 թվականի հուլիսի 22-ին հսկող դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Վ.Հ.-ի նկատմամբ: 2023 թվականի օգոստոսի 1-ին դատախազը քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղակել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Մ. Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, չունենալով տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական, 2023 թվականի հունիսի 14-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Արարատի մարզի Վեդի համայնքում վարել է «DAEWOO» մակնիշի, 23 LS 846 հաշվառման համարանիշի ավտոմեքենան եւ ենթարկվել վթարի: Մերի Վարդանյանի սթափության վիճակի զննությամբ պարզվել է, որ նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը կազմել է 0,411 միլիգրամ, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ համարվում է ոչ սթափ վիճակ, ինչի վերաբերյալ 2023 թվականի հունիսի 15-ին՝ ժամը 00:35-ին, կազմվել է թիվ ԱՆ080970 վարչական իրավախախտման մասին արձանագրությունը՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու վերաբերյալ:

Ք. Մ.

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 3-ից 4-ը բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎՆԱՍՆԵՐ՝ ԿԱՐԿՈՒՏԻՑ

Օգոստոսի 2-ի երեկոյան՝ ժամը 22-ի սահմաններում, շուրջ կես ժամ տեղացած կարկուտը ոչնչացրել է Իջեւան համայնքի Լուսաձոր գյուղի խաղողի, պտղատու այգիների, բանջարանոցների բերքը, ջարդել գյուղացիների տների շիֆերից տանիքներ, ապակե պատուհաններ, վնասել ավտոմեքենաների ծածկեր, լուսաձորցիների արեւային մարտկոցները: Գյուղի բնակիչներից ոմանք ասում են, որ կարկուտի վնասած տանիքներից անձրեւը տուն է թափանցել, վնասել տան գույքը: Լուսաձորի վարչական ղեկավար Վարդան Սարդարյանը հայտնեց, որ կարկտի պատճառած վնասները գնահատող հանձնաժողով է ստեղծվելու: Մայիսի 31-ին կարկուտ է տեղացել Նոյեմբերյան խոշոր համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղում, նաեւ Իջեւան խոշոր համայնքի Կիրանց եւ Աճարկուտ բնակավայրերում: Այդ կարկտահարություններից հետո բնական տարերքից տուժած գյուղացիներին պետական աջակցություն կամ փոխհատուցում չի եղել: Տավուշի մարզում ընդհանուր առմամբ գործում է 14 հակակարկտային կայան, որոնք բոլորն էլ տեղակայված են Նոյեմբերյան խոշոր համայնքում: Մարզի մյուս 3 խոշոր համայնքներում՝ Իջեւանում, Դիլիջանում, Բերդում հակակարկտային կայաններ չկան: Նիկոլ Փաշինյանի իշխանության 5 տարիներին Տավուշի մարզում ոչ մի հակակարկտային կայան չի ավելացել:

ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Իջեւանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանը հանդես է եկել տեսաուղերձով, որի մեջ դենդրոպարկի ներկայիս ծանր վիճակի համար մեղադրում է իջեւանցի Նիկոլ Փաշինյանին եւ ՔՊ-ական պաշտոնյաներին: Սայադյանը հայտնել է, որ նախկինում Նիկոլ Փաշինյանն իր ընտանիքի անդամներով կամ ընկերներով հաճախ էր այցելում դենդրոպարկ: Նա ասել է , որ ամեն ինչ սկսվեց 3 տարի առաջ, երբ շրջակա միջավայրի նախարար նշանակվեց Ռոմանոս Պետրոսյանը: Այդ ժամանակ Իջեւանի գինու, կոնյակի գործարանն Իջեւանի համայնքապետարանից վարձակալած ջրային հողերում, Աղստեւ գետի հունում ապօրինի շինարարություն իրականացրեց, ավերեց գետի հունը: Գետից խլված այդ տարածքում Իջեւանի գինու, կոնյակի գործարանը կառուցել է տաղավարներ, եռահարկ մեծ շենք, մեծ երկարությամբ եւ բարձրությամբ պատ: Իջեւանի գինու, կոնյակի գործարանն այդ տարածքում ապօրինի կենդանաբանական այգի է գործարկել, այնտեղ պահում է ջայլամ, այծյամ եւ այլն: Աղստեւի հունն ավերելու հետեւանքով գետի մակարդակը իջել է, երկու տարի յոթ ամիս դենդրոպարկը զրկվել էր գետից ինքնահոս եղանակով ջուր ստանալու հնարավորությունից: Դրա հետեւանքով դենդրոպարկում չորացել են 1500 հազվագյուտ, արժեքավոր ծառեր ու թուփ, 24 հազար տնկի: 2021 թվականին հոկտեմբերին քրեական գործ է հարուցվել, սակայն մինչեւ հիմա փորձագիտական հանձնաժողով չի ստեղծվել, որը կճշտեր, կհաշվարկեր Իջեւանի դենդրոպարկին պատճառված միլիոնավոր դոլարների վնասը: Մեխակ Սայադյանը հայտարարել է, որ պատրաստ է մինչեւ վերջ պայքարել իր հոր՝ Լյուդվիգ Սայադյանի կողմից 1961 թվականին ստեղծված դենդրոպարկը փրկելու համար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ՝ ՎԵՐԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԻՄՔՈՎ

«ԼՈՒՅՍ» հիմնադրամն ուսումնասիրել է 2022թ. ՀՀ տնտեսության արտահանման կառուցվածքը, վեր հանել դիտարկվող ժամանակահատվածում արտահանման աճի դատճառ հանդիսացող հիմնական գործոնները, ինչպես նաեւ այդ գործոնների բացակայության դայմաններում ՀՀ-ում տնտեսական աճի հնարավորությունները:

ՀՀ տնտեսության արտահանման կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է արտաքին գործոնների ազդեցությամբ եւ պարունակում է էական ռիսկեր:

2022թ.-ին ՀՀ տնտեսության արտահանման կազմում որոշ ապրանքախմբերի գծով նշանակալի աճ է արձանագրվել թե՛ արտահանման եւ թե՛ ներմուծման կառուցվածքում: Արտահանման ծավալների զգալի աճ գրանցած ապրանքների մի մասի արտադրությունը Հայաստանում ընդհանրապես բացակայում է, իսկ որոշների արտադրության ծավալները էապես զիջում են դրանց արտահանման ծավալներին:

Այսպես, 2022թ. արտահանման ընդհանուր ծավալի գրեթե 2/3-ը կազմում է 5 ապրանքախմբերի գծով արտահանումը՝ «մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «փոխադրամիջոցներ», «թանկարժեք ու ոչ թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից արտադրանք», «պատրաստի սննդամթերք, ալկոլոհալային եւ ոչ ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ», «ոչ թանկարժեք մետաղներ եւ արտադրանք»: Վերլուծությունը ցույց է տվել, որ 2022թ.-ին առկա են մի շարք գործունեության ոլորտներ, որոնցում արտադրված ապրանքների ծավալներն էապես զիջում են արտահանման ծավալներին: Էական շեղումներ կան «համակարգիչների, էլեկտրոնային եւ օպտիկական սարքավորանքի արտադրություն», «հիմնային մետաղների արտադրություն», «ավտոմեքենաների արտադրություն» եւ այլ ճյուղերում: Ընդ որում՝ նաեւ 2021թ. տվյալներից կարելի է նկատել, որ արտահանման՝ արդյունաբերության ծավալները գերազանցող մասը հիմնականում չի բացատրվում 2021թ. արտադրության ծավալներով (այսինքն՝ 2022թ? արտահանված ապրանքները չէին կարող արտադրված լինել 2021թ.-ին): Հետեւաբար, այդ տարբերությունները կարող են բացատրվել միայն վերարտահանման երեւույթի առկայությամբ: Եթե հաշվարկենք վերոնշյալ գործունեության տեսակների արտահանման ծավալների աճը, ապա կստացվի շուրջ 1.88 մլրդ ԱՄՆ դոլար այն դեպքում, երբ այդ նույն ոլորտներում արտադրության ծավալների աճը կազմել է շուրջ 587.8 մլն ԱՄՆ դոլար: Ստացվում է, որ առնվազն դրանց տարբերության չափով՝ շուրջ 1.3 մլրդ ԱՄՆ դոլարի չափով, տեղի է ունեցել վերարտահանում:

Այս հանգամանքները, ըստ էության, հիմք են տալիս եզրահանգելու, որ 2022թ.-ի արտահանման կազմում զգալի մաս է կազմել վերարտահանումը: Ընդ որում, վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ 2022թ.-ին վերարտահանումն առավելապես պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության հետեւանքներով, մասնավորապես՝ Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներով:

2022թ. ՀՀ տնտեսության արտահանման առնվազն 24.8%-ը (շուրջ 1.3 մլրդ ԱՄՆ դոլար) կազմում է վերարտահանումը, առանց որի արտահանման աճի տեմպը ավելի քան 2 անգամ ավելի ցածր կլիներ: Ավելին, վերարտահանումը էական նպաստում է ունեցել նաեւ տնտեսական աճին՝ ապահովելով 12.6% տնտեսական աճի շուրջ 2.6 տոկոսային կետը: Ընդ որում՝ 2022թ.-ին կտրուկ աճել է արտահանման առումով առաջատար առեւտրային գործընկեր ՌԴ արտահանման տեսակարար կշիռը ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման արդյունքում, ինչը, բնականաբար, հանգեցրել է արտահանման դիվերսիֆիկացիայի նվազման՝ ավելացնելով ՌԴ շուկայից հայաստանյան արտահանողների կախվածության ռիսկերը: Դեպի ՌԴ արտահանման տեսակարար կշիռը մեկ տարվա ընթացքում աճել է զգալիորեն՝ 17.1 տոկոսային կետով՝ 2022-ի արդյունքներով կազմելով 45.0% (դեպի ՌԴ արտահանման ծավալը 2022-ին, 2021-ի համեմատ, աճել է 186.8%-ով կամ 1,570.3 մլն ԱՄՆ դոլարով):

Հարկ է նշել, որ վերարտահանումը տնտեսական աճի վրա, բացի ուղղակի ազդեցությունից, ունի նաեւ անուղղակի ազդեցություն (բազմաթիվ տնտեսական սուբյեկտների տնտեսական ակտիվության աճ, վերարտահանման գործընթացներում ընդգրկված տնտեսական սուբյեկտների տնօրինվող եկամուտների աճ, որը հանգեցնում է նրանց սպառման մուլտիպլիկատիվ աճի, այդ գործընթացներում ընդգրկված տնտեսավարողների կողմից ներդրումային ծախսերի աճ, բյուջետային մուտքերի աճ, որը կնպաստի պետական ծախսերի աճին եւ այլն): Սույն հետազոտությունում տնտեսական աճի վրա նման անուղղակի ազդեցությունը չի գնահատվել:

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ԶՈՎ ԵՂԱՆԱԿ՝ ՕԳՈՍՏՈՍԻՆ

Հայաստանն օգոստոսի 4-ի դրությամբ գտնվում է Սեւ ծովից ներթափանցած ցիկլոնի ազդեցության գոտում: Դրա հետեւանքով հանրապետության մի շարք շրջաններում առկա են հորդառաս անձրեւներ: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնի տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյանը նշեց հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ, որ խիստ ինտենսիվ անձրեւներ են գրանցվել Գավառի հատվածում:

«Այս օրերին հյուսիս-արեւմուտքից առկա է նաեւ սառը օդի ներթափանցում մեր երկիր: Օգոստոսի 3-ի համեմատ՝ օգոստոսի 4-ին օդի ջերմաստիճանը նվազել է 6-10 աստիճանով: Եթե երեկ Արարատյան դաշտավայրում օդի ջերմաստիճանը հասել է մինչեւ 38 աստիճանի, ապա այսօր Երեւանում, Արարատյան դաշտում օդի ջերմաստիճանը չի գերազանցի 32 աստիճանը: Զով եղանակային պայմանները կպահպանվեն մինչեւ օգոստոսի 6-ը»,-ասաց Գագիկ Սուրենյանը:

Օգոստոսի 6-8-ն ընկած ժամանակահատվածում օդի ջերմաստիճանը կբարձրանա: Հանրապետության ամենատաք հատվածներում, ըստ կանխատեսումների, օդի ջերմաստիճանը 38-ից բարձր չի կանխատեսվում: Գագիկ Սուրենյանը տեղեկացրեց, որ օգոստոսին սաստիկ շոգեր չեն կանխատեսվում: Օդի ջերմաստիճանը կանխատեսվում է կլիմայական նորմայից 1 աստիճան բարձր: Նա ընդգծեց, որ օգոստոսին հանրապետության առանձին շրջաններում կդիտվեն ամպրոպային բնույթի կարճատեւ անձրեւներ:

Անդրադառնալով այս տարվա ամռան ամիսներին գրանցված եղանակին՝ Գագիկ Սուրենյանը նշեց, որ նախորդ տարվա համեմատ՝ բավական զով ու տեղումնառատ է եղել: Վերջին օրերին հանրապետությունում օդի ջերմաստիճանի բարձրացում է նկատվել. օգոստոսի 2-ին միայն մեկ կետում է 40 աստիճան տաքություն եղել՝ Արարատ-Ուրցաձոր հատվածում, իսկ Վայոց ձորի ցածրադիր հատվածներում գրանցվել է +39: Այս օրերին հանրապետության տարբեր հատվածներում գրանցվել են տեղումներ, իսկ Լոռիում, Տավուշում եղել են տեղատարափ անձրեւներ, խոշոր տրամաչափի կարկուտ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 16-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՇՏ ԵՂԵ՞Լ Է

Հայաստանի Հանրապետություն հացահատիկը գրեթե ամբողջությամբ (99.9%) ներկրվում է Ռուսաստանի Դաշնությունից: 2022 թվականին ՀՀ է ներմուծվել 533.6 հազար տոննա հացահատիկ, որից 379.0 հազար տոննան ցորեն է, 57.5 հազար տոննան՝ գարի, 97.1 հազար տոննան՝ եգիպտացորեն: Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ ՀՀ-ն հացահատիկի պահանջարկը մեծամասամբ լրացնում է ներկրման միջոցով: Իսկ արդեն տեղական շուկայում պատկերը փոքր-ինչ այլ է:

Այսպես, 27 տարբեր բնակիչներ միեւնույն վայրից՝Սյունիքի մարզի Շիկահող բնակավայրից, ահազանգում են. «Ցորեն ենք ցանել, երաշտի պատճառով չորացել է, ապագիովագրական ընկերությունն էլ՝ «Լիգա Ինշուրանս»-ը, հրաժարվում է փոխհատուցել»:

Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Լիգա Ինշուրանս»-ի հետ՝հասկանալու, թե ինչու չի տրամադրվել ընկերության կողմից փոխհատուցում: Մեզ պատասխանեցին, որ Հայաստանի տարածքում երաշտ չի հայտարարվել, հավանաբար հենց այս պատճառով էլ չի տրամադրվել փոխհատուցում:

«Ժողովուրդ» օրաթերթին Շրջակա միջավայրի եւ բնապահպանության նախարարությանը ենթակա «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ից հայտնեցին, որ իրենք տեղյակ են խնդրին, եւ այժմ այդ դեպքը ուսումնասիրվում է որպես մասնավոր դեպք բոլոր մանրամասնություններով:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեում կազմակերպվել է ««Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հանրային լսում, որին մասնակցել են շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը համառոտ ներկայացրել է նախագիծը, որից հետո քննարկման մասնակիցները հնչեցրել են իրենց կարծիքները ծրագրի վերաբերյալ եւ մի շարք հարցեր ուղղել ոլորտի պատասխանատուներին:

Կոմիտեի նախագահը նշել է, որ «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգի քննարկումները հանրային լսումով չեն սահմանափակվելու. առաջիկայում նախատեսվում են այցելություններ տարբեր գիտական կենտրոններ ու բուհեր՝ ծրագրի քննարկման եւ նախագծման փուլերում հնարավորինս շատ շահառուներ ներգրավելու եւ տարբեր ոլորտների առանձնահատկությունների հետ կապված խնդիրներին մանրամասնորեն ծանոթանալու նպատակով:

Նախատեսվում է սեպտեմբերից սկսել «Ակադեմիական քաղաք»-ի նախագծման փուլը, որը, համաձայն ժամանակացույցի, կտեւի երկու տարի: Կառուցման փուլը նախատեսվում է մեկնարկել 2025 թ. հոկտեմբերից եւ, նախնական գնահատմամբ, ավարտել 2029 թ. դեկտեմբերին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՄԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԸ՝ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեկ, վարչապետի որոշմամբ, Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի տեղակալ է նշանակվել Հրաչյա Սարգսյանը: Հրաչյա Սարգսյանն իր աշխատանքային կարիերան սկսել է դեռ 2010 թվականից՝ աշխատելով «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ում, «Արդշինբանկ» ՓԲԸ-ում՝ տարբեր հաստիքներով:

Թվում է, թե նման կրթություն եւ աշխատանքային փորձ ունեցողը կապ չի ունենա քաղաքականության հետ, սակայն 2018 թվականը շրջադարձային եղավ Սարգսյանի կյանքում: Նա «Իմ քայլը» դաշինքով ընտրվեց Երեւանի ավագանու անդամ, ապա դարձավ քաղաքապետի առաջին տեղակալ, հետո՝ քաղաքապետ: Քանի որ իշխանությունները սիրում են անակնկալներ մատուցել, Սարգսյանի նոր նշանակումն ավելին էր, քան անակնկալ: Ինչպե՞ս եղավ, որ բանկային համակարգում աշխատողը հանկարծ դարձավ քաղաքապետ, հետո՝ վարչապետի խորհրդական, իսկ այժմ՝ Պաշտպանության նախարարի տեղակալ:

«Ժողովուրդ» օրաթերթը խոսել է նախկին պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյանի հետ՝ իմանալու՝ ինչ կարծիք ունի նա այս նշանակման վերաբերյալ:

«Այս հարցը պիտի տանք ներկայիս իշխանություններին, թե ինչ արժանիքների համար է նշանակվել, ինչ ճանապարհ է անցել եւ ինչ ուղղություն է համակարգելու ՊՆ-ում: Ես Հրաչյա Սարգսյանին չեմ ճանաչում, բայց միանշանակ է, որ իշխանությունները ցանկացած պաշտոնի նշանակում են իրենց քաղաքական թիմից՝ իրենց քմահաճույքները կատարելու համար: Բայց, կարծում եմ, գնահատականներից մեկն այն պետք է լինի, որ Պաշտպանության նախարարությունը չպետք է լինի այն կառույցը, որ երբ մարդկանց համար գործ չեն կարողանում գտնել, այնտեղ նշանակեն պաշտոնի»:

Սեյրան Օհանյանը փաստում է, որ այս նշանակումը միանշանակ քաղաքական բնույթ է կրում, եւ իրենց քաղաքական թիմի անդամներից են նշանակում այնպիսի մարդկանց, ովքեր իրենց քաղաքական թիմի առաջադրանքներն է կատարելու: Հարցին, թե որքանով է ճիշտ ընտրել նախարարի տեղակալ այն դեպքում, երբ 5 ամիս թափուր է ՀՀ սահմանապահ զորքերի հրամանատարի պաշտոնը, 7 ամիս՝ ՀՀ ԳՇ օպերատիվ գլխավոր վարչության պետի պաշտոնը, 2 տարի 7 ամիս՝ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 2 տեղակալի պաշտոնը, Օհանյանը պատասխանեց. «Միանշանակ անընդունելի է, որ դրանք թափուր են: Սահմանապահ զորքերի հրամանատարը պետք է իրականացնի ազգային անվտանգության սահմանապահ զորքերի ողջ կառավարումը, այն էլ՝ այն ժամանակ, երբ մենք լուրջ սահմանային խնդիրներ ունենք: ՀՀ ԳՇ օպերատիվ գլխավոր վարչության պետի եւ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնները հանդիսանում են ուղեղը որոշումներ կայացնելու հարցում, եւ սա առաջին դեպքը չէ, որ այս պաշտոնները թափուր են: Սա խոսում է նրա մասին, որ այսօր ՀՀ իշխանությունները լուրջ չեն վերաբերվում Զինված ուժերի կարեւոր պաշտոնների համալրվածությանը եւ այդ պաշտոններում նշանակված մարդկանց կողմից քաղաքական իրավիճակներում ճիշտ որոշումներ ընդունելու, իրականացնելու գործին»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԿՏՐԱՄԱԴՐՎԵՆ ՍՆՆԴԻ ՔԱՐՏԵՐ

Սոցիալապես անապահով եւ արտակարգ իրավիճակներից տուժած 13,000 բաղաքացու կտրամադրվեն սննդի քարտեր՝ 3 ամիս ժամկետով, ամսական 9 հազար դրամի չափով:

Սյունիքի, Վայոց ձորի, Կոտայքի, Լոռու, Տավուշի, Շիրակի մարզերում ծրագիրն իրականացնելու նպատակով Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ու Միավորված ազգերի կազմակերպության Պարենի ու համաշխարհային ծրագիրը ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Առաջնահերթ համարելով խոցելի խմբերի պարենային ապահովության բարելավման ուղղությամբ արդյունավետ ծրագրերի իրականացումը՝ Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը կարեւորեց Պարենի համաշխարհային ծրագրի դերը: Նախարարը հույս հայտնեց, որ անհրաժեշտ ջանքերի ու ռեսուրսների համախմբմամբ եւ համագործակցության հստակ մեխանիզմների ձեւավորմամբ հնարավոր կլինի լիարժեք ապահովել ծրագրով սահմանված արդյունքները:

Պարենի համաշխարհային ծրագիրն իր հերթին պարտավորվել է իրականացնել շուկայի ֆունկցիոնալության գնահատում, վերապատրաստել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների սոցիալական աշխատողներին, մշակել սննդի աջակցության քարտի համար անհրաժեշտ ստանդարտ գործառնական ընթացակարգ եւ այլն:

Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ եւ տնօրեն Նաննա Սկաուն, ընդգծելով այս համագործակցության կարեւորությունը, նշեց, որ ոգեւորված են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ իրականացվող «Սննդի աջակցության քարտ» ծրագրի մեկնարկի համար:

«Այս համագործակցությունը նպատակ ունի օգնել խոցելի ընտանիքներին գնել սննդարար մթերք՝ չնայած այն հանգամանքին, որ նրանք վերջին տարիների ընթացքում ենթարկվում են բազմաթիվ ցնցումների, այդ թվում՝ պարենային գնաճի: Միասին մենք զորեղացնում եւ հույս ենք տալիս կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին՝ պարտավորվելով սննդի աջակցության քարտերի ծրագիրը հանձնել կառավարությանը՝ որպես աղետներից տուժած մարդկանց աջակցության գործիք»,- ասաց Նաննա Սկաուն:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունն այս աջակցությամբ ցանկանում է բարելավել եւ ուժեղացնել հնարավոր ցնցումներին դիմակայելու պետական ռազմավարությունը, ինչպես նաեւ խթանել սոցիալական աջակցության մեխանիզմները պարենային խնդիրներ ունեցող բնակչության խմբերի համար:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՌՑԱՆՑ

ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Հայաստանում եւ աշխարհի տարբեր երկրներում ստեղծագործող մի խումբ դասական երաժիշտներ, փորձելով իրենց աջակցությունը հայտնել շրջափակված Արցախին, առցանց հարթակում կանցկացնեն «Արցախի խաղաղության փառատոն»-ը (Artsakh Peace Festival):

Նախաձեռնությանը, որի մասին տեղեկությունը հրապարակվել է փառատոնի «Ֆեյսբուք»-ի պաշտոնական էջում, միացել են սոպրանո Ռուզան Մանթաշյանը, բարիտոն Նավասարդ Հակոբյանը, օպերային երգիչներ Ակսել Դավեյանը, Գուրգեն Բավեյանը, օպերային երգչուհի Լիանա Հարությունյանը եւ այլք:

Փառատոնի «Ֆեյսբուք»-ի պաշտոնական էջում հրապարակվել է մանիֆեստ՝ հանուն Արցախի:

«Մենք՝ աշխարհի տարբեր բեմերում հանդես եկող երաժիշտներս, այսօր մեր ձայնն ենք բարձրացնում՝ ի պաշտպանություն Արցախի Հանրապետության ժողովրդի, որը կանգնած է աննախադեպ հումանիտար ճգնաժամի առաջ: Ութ ամիս շարունակ 120 հազար մարդ համատարած շրջափակման մեջ է՝ իրական ցեղասպանության սպառնալիքի ներքո:

Արցախի բնակիչները 3 տարի առաջ բախվեցին ավերիչ պատերազմին, պատերազմ, որտեղ հազարավոր մարդիկ զոհվեցին, իսկ տասնյակ հազարները ստիպված եղան լքել իրենց տները՝ հարկադրաբար հեռանալով իրենց նախնիների հազարամյա գյուղերից ու քաղաքներից:

Արցախի մնացած հատվածն այժմ գտնվում է Ադրբեջանի կողմից լիակատար շրջափակման մեջ: Արցախն այսօր, ասես պաշարված ամրոց, դիմակայում է ծանրագույն դժվարությունների, սակայն մարդիկ չեն ցանկանում լքել իրենց պապերի երկիրը: Պաշարումը մարդկանց զրկել է բոլոր իրավունքներից եւ ազատություններից, տեղաշարժման հնարավորությունից, սննդի եւ դեղորայքի մատակարարումից, վառելիքից եւ խաղաղ, արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ մնացյալ ամեն ինչից: Փոխարենը արցախցին ամենօրյա սպառնալիքներ է ստանում Ադրբեջանից, որը կրակում է անգամ գյուղտեխնիկայի վրա՝ գյուղացուն թույլ չտալով մշակել սեփական հողը:

Մենք՝ երաժիշտներս, որ մեր կյանքը նվիրել ենք ամենաբարձր ու գեղեցիկ արվեստին, այսօր ցանկանում ենք Արցախի մեր հանդիսատեսի հետ կիսել մեր լավագույն զգացմունքները եւ կարեւորագույն մտքերը: Մենք ուզում ենք նվագել ու երգել արցախցիների համար, որպեսզի նրանց վերադարձնենք ՀՈՒՅՍԸ:

Մենք՝ երաժիշտներս, այսօր նույնպես զրկված ենք Արցախի մեր հանդիսատեսի համար ելույթ ունենալու հնարավորությունից:

Այդ պատճառով մենք հայտարարում ենք Արցախի խաղաղության փառատոնի մեկնարկը՝ վիրտուալ փառատոնի, որը կոչված է երաժշտության միջոցով պատմելու պաշարված ժողովրդի մասին, կոտրելու լռության պատը, մեր ձայնը դարձնելու Արցախի ձայնը: Ինչպես բոլորովին վերջերս, երբ մարդիկ իրարից բաժանված էին կովիդի պատնեշով, այսօր էլ այս բաց աշխարհում մենք ստիպված ենք Արցախի մեր հանդիսատեսի համար ելույթ ունենալ՝ օգտագործելով ինտերնետային միջոցները:

Մեր սիրելի՛ հանդիսատես,

մենք երկար տարիներ լցրել ենք ձեր սրտերը գեղեցիկ մեղեդիներով եւ ներդաշնակությամբ:

Այժմ էլ, ահա, խնդրում ենք, որ դուք բաց պահեք ձեր ականջներն ու սրտերը պաշարված արցախցիների ձայնի համար: Մեզ հետ եղե՛ք այս ծայրահեղ պահին, եկե՛ք միասին ավելի բարձր հնչեցնենք Արցախի ժողովրդի ձայնը:

Թույլ չտանք, որ տեղի ունենա վատագույնը:

Օգնե՛ք բացել Կյանքի ճանապարհը:

Տարածե՛ք այս մանիֆեստը:

Եկե՛ք արժանի լինենք երաժշտության՝ մեզ շնորհված բարձր առաքելությանը»:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԿՄԱՐՄՆԱՎՈՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍՈՒՀՈՒՆ

Իտալացի ականավոր կոմպոզիտոր Ջակոմո Պուչինիի «Տուրանդոտ» օպերայում, որը հանդիսատեսը հերթական անգամ դիտելու հնարավորություն կունենա օգոստոսի 6-ին, Տուրանդոտի դերում հանդես կգա նշանավոր սոպրանո, ՀՀ վաստակավոր արտիստ Անահիտ Մխիթարյանը:

Հայաստանյան եւ աշխարհի տարբեր հեղինակավոր բեմերի հանդիսատեսի հիշողություններում անջնջելի են երգչուհու անզուգական երգեցողությունը, փայլուն խաղն ու առինքնող եւ անմոռանալի կերպարները: Այս բեմելը առանձնահատուկ է, քանի որ Մխիթարյանն առաջին անգամ է անդրադառնում Տուրանդոտին:

Արքայադուստր Տուրանդոտի եւ Կալաֆի սիրո պատմությունը ներկայացնող օպերայի համաշխարհային պրեմիերան տեղի է ունեցել 1926 թվականին Միլանի «Լա Սկալա» թատրոնում, որից հետո այն տարածում է գտել աշխարհի տարբեր անկյունների ամենահեղինակավոր համերգասրահներում եւ թատրոններում: Կալաֆը երիտասարդ արքայազն է, որը փորձում է գրավել արքայադուստր Տուրանդոտի սիրտը, ինչն էլ նրան հաջողվում է:

Երեւանի օպերային թատրոնի «Տուրանդոտ» ներկայացման մեջ ընդգրկված են թատրոնի ինչպես արդեն անվանի, այնպես էլ երիտասարդ մենակատարները, թատրոնի երգչախումբը, սիմֆոնիկ նվագախումբը:

Բեմադրությունն իրականացրել է ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, Նովոսիբիրսկի օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի գլխավոր ռեժիսոր, Նովոսիբիրսկի պետական կոնսերվատորիայի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Վյաչեսլավ Ստարոդուբցեւը, գեղեցիկ դեկորացիաների եւ շքեղ հագուստների հեղինակն է Սանկտ Պետերբուրգի Մարիինյան թատրոնի Պրիմորսկիի բեմի գլխավոր դիզայներ Պյոտր Օկունեւը, իսկ հագուստները պատրաստել է «Գաբաջյան նորաձեւության տուն»-ը: Ներկայացման լուսային ռեժիսորն է Սերգեյ Սկորնեցկին, իսկ վիդեո կոնտենտի բեմադրիչը՝ Վադիմ Դուլենկոն:

ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՂԱՐԿՎԵՑ

Ամերիկյան Disney Plus հոսքային ծառայությունը չեղարկել է Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի մասին «Աթաթուրք» սերիալի ցուցադրությունը: Այս մասին գրում է թուրքական yenisafak.com կայքը՝ մանրամասնելով, որ սերիալի ստեղծման վրա ծախսվել է 8 մլն դոլար:

Աղբյուրի պնդմամբ՝ սերիալի ցուցադրությունը չեղարկվել է ԱՄՆ հայկական լոբբիի ճնշման արդյունքում, թեեւ ավելի վաղ հաղորդվել էր, որ այն հարթակում կցուցադրվի 2023 թվականի հոկտեմբերի 29-ից:

Այժմ հայտարարվել է, որ 6 դրվագից բաղկացած սերիալը նոյեմբերի 3-ին կցուցադրվի որպես գեղարվեստական ֆիլմ եւ միայն Թուրքիայի կինոթատրոններում:

Նշվում է, որ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը սոցցանցերի իր էջերում գրառումներ է կատարել եւ պահանջել չեղարկել «Աթաթուրք» սերիալի ցուցադրությունը:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ՏԻԿՆԻԶՅԱՆԻ ՎԱԽԵՐԸ

Մոսկվայի «Լոկոմոտիվի» եւ Հայաստանի հավաքականի պաշտպան Նաիր Տիկնիզյանը պատմել է իր ֆոբիաների մասին:

«Հիմնական վախերս են սարդերը, ինքնաթիռով թռչելը եւ մթությունը: Երբ թիմի հետ թռչում ենք, ինքնաթիռի ամեն ցնցումից ես էլ եմ ցնցվում: Մթության հետ կապված մանկուց վախենում եմ քնել մթության մեջ: Միշտ թույլ լուսավորություն եմ թողնում, այլապես չգիտեմ՝ ինձ կարող են ինչ-որ անդրկողմյան ուժեր գողանալ: Այդպես է իմ գլխում: Սարդերի հետ կապված՝ հավանաբար սարդերից շատերն են վախենում»,- ասել է Տիկնիզյանը «Լոկոմոտիվի» մամուլի ծառայության հետ զրույցում: Ռուսաստանի Պրեմիեր լիգայի առաջին երկու տուրերում Տիկնիզյանը խփել է երեք գոլ:

ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՊԱՅՔԱՐԸ

Ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման երրորդ փուլում պայքարը կշարունակի հայկական միայն մեկ ակումբ: «Արարատ-Արմենիա»-ն արտագնա խաղում մրցել է հունական «Արիս»-ի հետ ու զիջել նվազագույն հաշվով: Թիմերի երեւանյան հանդիպումն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1:1 հաշվով: «Արարատ-Արմենիա»-ն դուրս մնաց Կոնֆերենցիաների լիգայի երկրորդ փուլից:

Հայաստանի չեմպիոն «Ուրարտու»-ն մրցել է ռումինական «Ֆարուլ»-ի հետ: Երեւանում կայացած խաղում Հայաստանի չեմպիոնը պարտվել է 2:3 հաշվով, ինչպես առաջին խաղում էր: Դմիտրի Գունկոյի թիմը դուրս է մնացել եվրագավաթային մրցաշարից: Երեւանի «Ալաշկերտ»-ը հյուրընկալվելիս հետխաղյա 11-մետրանոց հարվածաշարում զիջել է հունգարական «Դեբրեցեն»-ին: Խաղի հիմնական ժամանակն ավարտվել է 1:2 հաշվով եւ հետխաղյա 11-մետրանոց հարվածաշարում առավել դիպուկ են եղել «Դեբրեցեն»-ի ֆուտբոլիստները՝ 3:1: Հայկական ակումբներից ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի երրորդ փուլ է դուրս եկել միայն «Փյունիկ»-ը, որը Աբովյանի քաղաքային մարզադաշտում հյուրընկալելով շվեդական «Կալմար»-ին՝ հաղթել է 2:1 հաշվով (ինչպես առաջին խաղում): Եղիշե Մելիքյանի թիմը դուրս է եկել երրորդ փուլ, որտեղ նրանց մրցակիցը նորվեգական «Բուդյո-Գլիմտ»-ն է:

ՄԵՐ ԸՆՏՐԱՆԻՆ՝ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Հայաստանի կանանց բասկետբոլի Մ18 տարեկանների հավաքականը ավարտեց իր ելույթները Եվրոպայի առաջնության C դիվիզիոնի B ենթախմբում: Այս մասին հայտնում է Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան:

Խմբում զբաղեցնելով երկրորդ հորիզոնականը՝ Հայաստանի թիմն անցել է կիսաեզրափակիչ փուլ: Կայացած երրորդ խաղում Հայաստանի հավաքականը 53-62 հաշվով պարտվեց Ալբանիայի հավաքականին: Հայաստանի կազմում ամենաարդյունավետ խաղացողը Սեդա Գաբրիելյանն էր՝ վաստակած 23 միավորով: Նա նաեւ 8 անգամ տիրել է օղակից անդրադարձող գնդակին եւ կատարել է 2 արդյունավետ փոխանցում:

Կիսաեզրափակիչ փուլի հանդիպումը տեղի կունենա օգոստոսի 5-ին: Հայաստանի հավաքականի մրցակիցը Մալթայի հավաքականն է:

● *Օգոստոսի 11-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Մորաքույրը Փարիզից» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞r դեռfում են դադարեցվում համայնքի ղեկավարի լիազորությունները եւ ի՞նչ ընթացակարգով:

Ռուստամ Սարուխանյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարեցվում են համայնքի ավագանու կողմից՝ իր ընդունած որոշման կամ կազմած արձանագրության հիման վրա, այն դեպքերում, երբ համայնքի ղեկավարը.

- հրաժարական է տվել,
- դադարեցվել է համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
- համայնքի ղեկավարը դադարել է համայնքի բնակիչ լինելուց,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով համայնքի ղեկավարը դատապարտվել է ազատազրկման եւ կրում է պատիժը,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով համայնքի ղեկավարը ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
- համայնքի ղեկավարն անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում:

ՀՀ ՏԿԵՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համայնքի ղեկավարի լիազորությունները դադարեցվում են նաեւ, երբ՝

- համայնքի ղեկավարը վեց ամիս անընդմեջ չի հրավիրում համայնքի ավագանու նիստ,
- եթե համայնքի ղեկավարը մահացել է:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է ապահովել նոր կառուցվող բնակելի շենքերի սեյսմակայունությունը:

Մնդրանիկ Սիմոնյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ պետք է մանրամասն ուսումնասիրել կառուցվող շենքի շինհրապարակի ինժեներաերկրաբանական եւ սեյսմիկ պայմանները, որոնց հիման վրա եւ ելնելով սեյսմակայուն շինարարության գործող նորմերից՝ նախագծվում է շենքը: Շենքի նախագիծը պարտադիր պետք է անցնի մասնագիտական փորձաքննություն: Շինարարությունն իրականացնողը եւ որակի հսկողը պետք է ունենան համապատասխան լիցենզիաներ: Պետք է արգելվի ցանկացած շեղում հաստատված նախագծից:

ՀՀ ՍԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Շենքը շահագործելիս անհրաժեշտ է պահպանել մշակված կանոնները եւ այլն: Այս դեպքում շենքի սեյսմակայունությունը կլինի բարձր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Օգոստոսի 3-ին Արմավիրի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Պտղունք գյուղի Թութակյան փողոցում գտնվող կահույքի արտադրամասում:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից երկու մարտական հաշվարկ:

Հայտարարվել է հրդեհի բարդության «Թիվ 2» աստիճան. դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային եւ Երեւան քաղաքի փրկարարական վարչությունների հրշեջ-փրկարարական ջոկատներից եւս երկու մարտական հաշվարկ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+12 + 15 +25 + 29
Կոտայքի լեռներ	+11 + 15 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+20 + 22 +31 + 33
Գեղարքունիք	+11 + 16 +23 + 26
Լոռի	+12 + 16 +22 + 25
Տավուշ	+16 + 20 +25 + 28
Արագածոտնի լեռներ	+13 + 15 +22 + 27
Արագածոտնի նախալեռներ	+20 + 22 +30 + 35

Արարատ	+22 + 24 +35 + 37
Արմավիր	+20 + 22 +35 + 37
Վայոց ձորի լեռներ	+13 + 15 +23 + 25
Վայոց ձորի նախալեռներ	+22 + 24 +35 + 37
Սյունիքի հովիտներ	+19 + 23 +32 + 36
Սյունիքի նախալեռներ	+15 + 17 +25 + 28
ԼՂՀ	+19 + 21 +30 + 34
Երեւան	+20 + 22 +34 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.8.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*